վասն հոգո իմո փրկութեան և ամուսնոյ իմոյ. ով կարդայք յիշեցէք ի Քս. Տր. Ած. ողորմի յիւրում գալստեանն ամէն: Ես զԱբրահամ կրաւ-նաւորս՝ զկազմողս յիշեցէք ի Քս. Տր. ԱԾ. ողորմի. ամէն:

Ծանոթ. *Ունի միայն Լալայանը,* XVIII, *152, ուղղել ենք՝* :ՌԿԹ: (1620)=:ՈԿԹ: (1220): Գաչան=Գագան:

*Տե՛ս նաև Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 79։*

## ՎԵՐԻՆ ԴԱՐԱՆԼՈՒԽ (ՀՆՈՒՄ՝ ՎԵՐԻՆ ԿԶՆՈՒՏ)

*Այս գյուղի հնագույն անունը նույնպես անհայտ է՝* XVII *դարից հայտնի էր վերին Կզնուտ անունով։*

*Գյուղի արձանագրություններ ունեցող ամենամեծ հուշարձանը գերեզմանատունն է, որը գտնվում է գյուղի կենտրոնում, ս. Գևորգ եկեղեցու շուրջը։ Հնում այն շրջապարիսպ է ունեցել, որի մնացորդները կան այժմ։ Գերեզմանատունն ընդարձակ է, այնտեղ կան բազմաթիվ խաչքարեր և տապանաքարեր. մեծ մասը լավագույն վարպետների գործեր են։ Տապանաքարերը խիստ բազմաձև են,* XV—XVII *դարերի սովորական բոլոր նմուշներն այստեղ խմբված են կողք-կողքի. Նշանակալից է և այն, որ նրանց մեծ մասի վրա քանդակներից բացի կան կենցաղային տեսարաններ՝ վարպետորեն կատարված։ Ամենահին թվականն այս գերեզմանատանը 1451-ն է։*

*Գերեզմանատան մեջ է գյուղական ս. Գևորգ եկեղեցին՝ շինված ճեղքված քարերով, որը մեծ նորոգումների է ենթարկվել Ալաշկերտի գաղթականների կողմից։ Պատերի մեջ որպես շինանյութ օգտագործվել են խաչքարեր և տապանաքարեր։*

*Գյուղամիջում կան մեկ ավեր և մեկ շեն ձիթհաններ, որոնցից առաջինի պատին ագուցված խաչքարի վրա կա շինարարական արձանագրություն (№ 644)՝ 1651 թվական։*

*Գյուղից արևմուտք, գետակի ձախ ափին, բարձր բլուրի գագաթին մնում են բերդի պարիսպների ավերակներ, որին տեղացիք Ալբերդ են անվանում ավանդաբար. Հավանաբար սա հենց այն բերդն է, որը նույն անունով հիշատակված է Ասողիկի կողմից, Թէոփիլոս կայսեր արշավանքների առնչությամբ՝* IX *դարի առաջին կեսում։ Բերդից հարավ կա մի հասարակ մատուռ՝ ս. Մամաս անունով։*

*Ներկա ժողովածուի մեջ այս գյուղից ներկայացվում են 83 արձանագրություն, որոնցից միայն 5-ն են հրատարակված եղել։*

### ԳՅՈՒՂԱՄԻՋԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

***898. ԽԱՉՔԱՐ**, մեծ, գեղաքանդակ, կանգնած է արևմտյան եզրին, պատվանդանի վրա. քիվին և խորանի վերին եզրերին 3 տող.*

··· ՍՈԲԽԱՆՍԲ ԱՍՄԱՂԱՒԻՆ
ՈՐԿԱԴՈՂ

Թ ՎԶ

· · · ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՍԱԴԱՔԻՆ|
ՈՐ ԿԱՐԴՈԴ| ԹՎ. :Չ: (1451):

Ծանոթ. *Առաջին տողի սկզբի մասում քարը կոտրված է։ Երկրորդ տողը թողնված է թերի։*

899. ԽԱՉՔԱՐԵՐ, երեք հատ, մեծ և գեղաքանդակ. իրար կից, կանգնած են գերեզմանատան արևմայան եզրին, նախորդից հարավ. հարավայինի քիվին և խորանի վերին եզրերին 2 տող.

ԽԱՉՍԲԱՐԷԽՍԵՂԻՆԷԾՂ

ԹՎ ՋԷ

ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ ԵՂԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑ. ԹՎ. ։ՋԷ։ (1458)։

Ծանոթ. Դիմացը կա մեծ տապանաքար՝ առանց արձանագրության։

900. ՄԻՋԻՆԻ քիվին, 1 տող.

ՍԲԽՉՍԲՐԷԽՍՓԻՐԱՉԻՆ։ԹՎՋՀԵ։

ՍԲ. Խ[Ա]ՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՓԻՐԱՉԻՉԻՆ. ԹՎ. ։ՋՀԵ։ (1526)։

901. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆԻ քիվին. 2 տող.

ԵՍՀԱՄՉԷՍՈՐԴԻՓԻՐԱՉԻՉԻՆ
ԿՆԿՑԻԽՉՍՓՐԿՈՒԹԻՀՈԳՈՅԻՄՈՅ

ԵՍ՝ ՀԱՄԶԷԱ, ՈՐԴԻ ՓԻՐԱՉԻՉԻՆ Կ[Ա]ՆԿ[ՆԵ]ՑԻ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ։

Ծանոթ. Այս երեք հուշարձանները պատկանում են միևնույն առհմին. սրանց շարքում կանգնած է մեկ խաչքար ևս, բայց առանց արձանագրության։

902. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է եկեղեցու արևմտյան կողմում. երեսին 2 տող.

ԱՅՍՀԱՆԳԻՍՏԿՈՍԻ
Ա-ՅԻՆ։ԹՎՋԺԶ

ԱՅՍ [Է] ՀԱՆԳԻՍՏ ԿՈՍԻ[Ա]-ՅԻՆ. ԹՎ. ։ՋԺԶ։ (1467)։

Ծանոթ. Անձնանունը լինի Կոստանդին անվան սղված ձևերից մեկը։

903. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է եկեղեցու հարավում. հարավային կողին պատկերված է ճոնր՝ առջևում մկրատ, ցրցամ տալու կեռ գործիք և փափախի կաղապար, սրանցից վեր 1 տող.

Թ ՋԼԱ ԱՅԷ ՀԱՆԿԻՍՏՐԸՍՏԵՓԱՆՈՍԻՆ

ԹՎ. ։ՋԼԱ։ (1482) ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ ԸՍՏԵՓԱՆՆՈՍԻՆ.

Լուսանկ. 178

904. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, նախորդի մոտ հյուսիսից, հարավային կողին ծալապատիկ նստած մարդ, աջ կողմում գավ և գաթա, ձախում մկրատ և ցրցամ տալու կեռ գործիք, արևելյան ծայրը կոտրված, որով և արձանագրությունը թերի. 1 տող.

ԱՅՍԷՀԱԳՆԻՍ ...
ԹԴՂՍՈՒՔ

ԱՅՍ Է ՀԱ[Ն]Գ[Ի]ՍՏ ՍԻՄԷՈՆԻՆ, [ՈՐ] ԿԻՍԱՒՐԵՍ ՎԱԽՃԱՆԵՑԱՒ ԵՒ ԵԹՈՂ ՍՈՒՔ ԱՆՄԽԻԹԱՐ . . . . .

Ծանոթ. Ճոն պատկերող այս տապանաքարը պիտի վերաբերի Նախորդ Ստեփանոսի գերդաստանին և ժամանակով մոտ նրան։

Լուսանկ. 179

**905. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ և օրորոցաձև, եռաստիճան պատվանդանի վրա, հյուսիսային կողին ննջեցյալ, առջևը ղավեր ու ըլիթներ, ապա մարդագլուխ կենդանի, որի գլխի մոտ միայն թվականը.*

ԹՎ
ՋԾԷ

ԹՎ. :ՋԾԷ: (1508):

Ծանոթ. *Գտնվում է եկեղեցու հարավ արևելյան կողմում։*

**906. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ, ճակտոնով. գտնվում է եկեղեցու հարավային պատի մոտ. քիվին և ներքևի գնդի շուրջը 2 տող.*

ԽԱՉՍԲԱՐԷԽ | ԱՒՍՇԱՀՍՎԱՐԻՆ




ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՇԱՀՍՎԱՐԻՆ. ԱԿՈԲ:

Ծանոթ. *Վերջին ԱԿՈԲ անունը կազմողինն է։ Այս նշանավոր արվեստագետից հայտնի են այժմ մեկ տասնյակից ավելի խաչքարեր և գերեզմանաքարեր, շինված մեծ վարպետությամբ՝ Մարտունու և Բասարգեչարի գյուղերում։ ԱԿՈԲ կազմողի թվագրված հուշարձանները 1540—1575 թվականների են։ Այս գյուղում ընդամենը երկու հատ են, երկուսն էլ անթվական։*

Լուսանկ. 180

**907. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *օրորոցաձև, գտնվում է նախորդի մոտ, բայց տեղից շարժված. հյուսիսային կողին չորս խորան և խաչեր, հարավում՝ թամքած ձի, որի ոտների տակին գալարվող վիշապը գլխով մոտեցել է ձիու վզին, մյուս ծայրին նստած մարդ, ձախ ձեռքին ղաթա, ներքևում պնակ՝ լիքը կերակուրներով. ապա մեծ և զարդարուն ղավ, երկփողանի սրինգ. ձիու առաջ՝ վերևում՝ անորոշ քառակուսի իր, իսկ ներքևում հայելիանման իր, որի վրա միայն կազմողի անունը՝ 2 տող.*

ԱԿՈ
ԲՆԿ

ԱԿՈԲ ՆԿԱՐՈՂ:

Լուսանկ. 181

**908. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ, գտնվում է եկեղեցու հարավային մուտքի դիմաց՝ խաչերի արանքներում.*



Ի ԹՎ. :ՋԿԶ: (1517) ԱԼԷՔՍԱՆՈՍՍ ԿԱՆԿՆԵՑՈՒՑԻ ԶԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԻ ՍՈՒՔԻԱՍԻ ՀՈԳՈՅՆ:

Ծանոթ. *Ներքևի գնդի միջի տառերը մնում են անորոշ։*

**909. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ, գտնվում է նախորդ խաչքարի դիմաց. վրան 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՍՈ
ՒՔԻԱՍԱՂԻՆՈՐԷԱԽ
ԱՋՆՈՐԴԳԻԽՂԻՍԹՎՋԿԸ:ԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍՈՒՔԻԱՍ ԱՂԻՆ, ՈՐ ԷՐ ԱԽԱՋՆՈՐԴ ԳԻՂԻՍ. ԹՎ. :ՋԿԸ: ԻՆ. (1519):

*Հրատ. Սմբատյանց, 539. Լալայան, XVIII, 151.*

**910. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ և տափակ, գտնվում է եկեղեցու հարավային մուտքի դիմաց. երեսին 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԿԻՍՏ: ՄՈՒՍԷ
ՍԻՆՈՐԷՐՔԱՂՄՇԱԿ:ԹՎՋՀԱ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄՈՒՍԷՍԻՆ, ՈՐ ԷՐ ՔԱՋ ՄՇԱԿ. ԹՎ. :ՋՀԱ: (1522):

Ծանոթ. *ՔԱՂ=ՔԱՋ.*

*Հրատ. Սմբատյանց, 539. Լալայան, XVIII, 131.*
Լուսանկ. 182

**911. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ և օրորոցաձև, գտնվում է եկեղեցու հյուսիս-արևմըտյան անկյունի մոտ։ Հյուսիսային կողին սաղ նվաղող՝ առջևը խմիչք է, գավեր և ըլիթներ. ապա աղեղնավոր մարդ՝ որի առջևից փախչում են երկու եղջերուներ, դրանց առջևը կարում է մի հեծյալ՝ սուրը ձեռքին. հյուսիսային կողին և արևելյան ու արևմայան ճակատներին 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԴԻՍՏՄԽԻԹԱՐԻՆՈՒԷՈՐԴԻՄՈՒՐԱՏ ԻՆ

ԲԱԹՆԱԻՊԻՆ

ԹՎՌԱ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԽԻԹԱՐԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՄՈՒՐԱՏԻՆ. ԹՎ. :ՌԱ: (1552):

**912. ԽԱՉՔԱՐ**, *գտնվում է գերեզմանատան եզրին. փոքր, ճակատի վրա 2 տող.*



ՍՐ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՔԱՐԱՄ ԽԱԹՈՒՆԻՆ. ԹՎ. :ՌԴ: (1555):

**913. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ և օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արևմըտյան մասի Բ շարքում. հյուսիսային կողի կենտրոնում ննջեցյալ, աջ կողքին գավազան, խմիչքի երկու գավ և ըլիթ. ձախ կողքին՝ գավ, ըլիթներ, պնակի մեջ կերակուր, ապա որսի տեսարան՝ փախչող այծ, որի առջևում աղեղնավոր մարդ. դրանցից վեր 1 տող.*

ԱԽՀԱԿՄՊԱԽՈՒԱՐԱԲՆՈՐԴԻՂՁԻՆ ԹՎ ՌԺԲ

ԱՅՍ Է ՀԱՆԴԻՍՏ ՊԱՐԽՈՒՏԱՐԻ[Ն], ՈՐԴԻ ՂՁԻՆ. ԹՎ. :ՌԺԲ: (1563):

Լուսանկ. 183

*914.* ***ԽԱՉՔԱՐ,*** *մեծ և գեղաքանդակ (այս գերեզմանատան մեջ ամենալավը), գտնվում է եկեղեցու մուտքի մոտ, երկրորդ շարքում. քիվին 1 տող.*

ՍԲԽՉՍՓՐԿՈՒԹԵՀՈԳՈՆՄԻՐԶԻՆԹՎԸ Ժ Թ

ՍԲ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵՆ. ՀՈԳՈՒՑՆ ՄԻՐԶԻՆ. ԹՎ. :ՌԺԹ: (1570):

Լուսանկ. 184

*915.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *մեծ, օրորոցաձև, գտնվում է նախորդ խաչքարի շարքում, հարավային կողքին խորաններ և նրանց վրա 1 տող.*

ԵՄՐԶԷՍԿՆԿԵՑԽՉԱՍՓՐԿՈՒԹԵՈՐԴՄԳՐԳՌ

ԵՍ ՄԻՐԶԷՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵՆ ՈՐԴՒՈՑ ԻՄ ԳՐԻԳՈՐԻ:

Լուսանկ. 185

*916.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *փոքր, օրորոցաձև, գտնվում է նախորդի մոտ. հյուսիսային կողին խորաններ, որոնցից վեր 1 տող.*

ԵՄՐԶԷՍԿԱՆԿԽԱՓՐԿՈՒԹԵՀԳՈՐԴՄԹՈՄ

ԵՍ ՄԻՐԶԱՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵ ՀՈԳՒՈՑ ՈՐԴԻ ԻՄ ԹՈՄԱՍԻ.

Ծանոթ. *Վերջին երեք արձանագրությունները վերաբերում են նույն* Միրզայի *տոհմին. վերջին երկու անթվականները ավելի հին պիտի լինեն քան իր՝ Միրզայի տապանաքարը, քանի որ նրա կողմից են շինված:*

*917.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *մեծ, լավ վարպետի ձևավորած, գտնվում է եկեղեցու հյուսիսում. հյուսիսային կողին ծնկաչոք սազ նվագող, կողքին գավ և լիքը կերակուրներով ափսե, ապա կանգնած մարդ՝ ձեռքին գավ և գաթա. հարավային կողին խորաններ, որոնց վերին և ներքին շրջանակներին 2 տող.*

ԵՍՄԷԼՔՌՄՍԿՆԿՑԻԽՉՍՀԱՐ
ԻՄՈՀԱՆԻՍԻՆ ԹՌԻԱ

ԵՍ ՄԷԼՔՈՒՄՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄ ՈՀԱՆԻՍԻՆ. ԹՎ. :ՌԻԱ: (1572):

*918.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *փոքր, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան հարավում. հարավային կողին նստած մարդ, ձեռքին քառակուսի հայելիաձև իր, աջեվում փոքրիկ գավ, երկփողանի սրինգ և կերակրի ափսե.*

ԱՍԷ ՀԱՆԿԻՍՏ
ՔԱՍ
ԲԱՐ ԹՎՌԻԲ
ԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ ՔԱՍԲԱՐԻՆ. ԹՎ. :ՌԻԲ: (1573):

Ծանոթ. *Անունը գրված է հայելիաձև իրի վրա. իսկ թվականը՝ արևմտյան ճակատին:*

Լուսանկ. 186

919. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան հարավային մասում. հարավային կողին թամքած ձի, որի սանձից բռնել է մարդ. ձիուց վեր կապարճ և աղեղ, մարդու կողքին գավ, բլիթներ, կերակուրի լիքը աման և շամփուրով խորոված։ Հյուսիսային կողին նստած մարդ՝ ձեռքերը խաչած կրծքին, ապա չորս խորաններ, 5 տող.

ԱՍՀԱՆԳ
ԻՍՄ ԴԻՎ
ԱՆԻՆ։ԹՌ
ԻԵ

ՆԵՐՍԷՍՆԿԱՐՈՂ

ՆԵՐՍԷՍ ՆԿԱՐՈՂ։ ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ԴԻՎ|ԱՆԻՆ։ ԹՎ. ՌԻԵ։ (1576)։

Ծանոթ. Նկարողի հիշատակագրությունը հարավային կողի վերին շրջանակի վրա է, մնացածը արևմտյան ճակատին։

Լուսանկ. 187 (մի մասը)։

920. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. հյուսիսային կողին կենտրոնային տեսարան և շրջանակներին.

ՍԲԽԱՉ ՍԲԱՃԷԽՕ
ՎԱՐԹՈՒՄԻՆՈՐԴԻԷՎԱԶԻՆԹՎ
ՌՃ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕ|Ս ՎԱՐԹՈՒՄԻՆ, ՈՐԴԻ ԷՎԱԶԻՆ. ԹՎ. ՌՃ։ (1651)։

921. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում, եկեղեցու հարավային մուտքի մոտ, արևմտյան ճակատին 5 տող.

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏՂԱՐԱ
ՅԽԱՆԻՆՈ
ՐԴԻ ՊԱԼ
ԱՍԱՆԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՂԱՐԱ|ՅԽԱՆԻՆ, Ո|ՐԴԻ ՊԱԼԱՍԱՆԻՆ։

922. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տավակ, նախորդի մոտ, երեսին 2 տող.

ԱՅՍՀԱԳԻՏԵՆԿՊՐ ԻՆ
ԱԴԻՆՈՐԴԻԲԱԼԱՍԱՆԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԵՆԿԻՊԱՐԻՆ,|ԱԴԻՆ, ՈՐԴԻ ԲԱԼԱՍԱՆԻՆ։

923. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. հյուսիսային կողին կենտրոնային տեսարան և շրջանակներին 3 տող.

.......ՉՍԲԱՐԷ
ԽՕՍԿՈՒԼՆԱԶԱՐԻՆՈՐԴ
ԻՊԱԼԱՍԱՆ...

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷ|ԽՕՍ ԿՈՒԼՆԱԶԱՐԻՆ ՈՐԴ|Ի ՊԱԼԱՍԱՆԻՆ . . . .

Ծանոթ. Արձանագրության սկիզբը և վերջը թաղված են հողի մեջ։

**924. ԽԱՉՔԱՐ,** *մեծ և զեղաչանդակ, գտնվում է գերեզմանատան հարավային մասում. քիվին, խորանի վերևում և տակին 5 տող.*

ԵՍՍԱՌՈՒԽԱՆԱՒԱՆԿ

ԹՎՌՃ Ա



ՆԵՑԻ ԽԱՉՍԲԱՐԷԽԱՍ
ՄՕՐՆԻՄՌՑԽԱՍՄԵ
ԼԻԲ ԻՆ

ԵՍ ՍԱՐՈՒԽԱՆՍ ԿԱՆԿ|ՆԵՑԻ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒԱ|
ՄՕՐՆ ԻՄՌՑ ԽԱՍ ՄԵ|ԼԻՔԻՆ: ԹՎ. :ՌՃԱ: (1652):

Լուսանկ. 188 *(մի մասը)*.

**925. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *մեծ և օրորոցաձև, գտնվում է նախորդ խաչքարի մոտ, հարավային կողին հեծյալ որսորդ, առջևում քարայծ, ապա քանոն և սաղ նվագողներ. առջևները գավ և գավաթ. վերին շրջանակին 1 տող.*

ԱՅՍԷՀԱԳԻՍՏՍԱՌՈՒԽԱՒՆԵԻԷՈՐԴԻՂԱՐԱՅԽԱՒՆԹՌՃԹ

ԱՅՍ Է ՀԱ[Ն]Գ[Ի]ՍՏ ՍԱ[Ր]ՈՒԽԱՆԻՆ, ԵՒ Է ՈՐԴԻ ՂԱՐԱՅԽԱՆԻՆ. ԹՎ. :ՌՃԹ: (1660):

Լուսանկ. 189

**926. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *տափակ, նախորդի մոտ, երեսին 5 տող.*

ԱՅՍՀԱՆԳԻ
ՍՏԲԱԼԱՍԱ
ՆԻՆՈՐԴԻՍ
ՍԱՐՈՒԽԱՆԻՆ
ԹՎՌՃԼ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻ|ՍՏ ԲԱԼԱՍ|ԱՆԻՆ ՈՐԴԻ Ս|ԱՐՈՒԽԱՆԻՆ.
ԹՎ. :ՌՃԼ: (1681)

**927. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, գտնվում է նախորդների մոտ, հարավային կողին կենցաղային տեսարան և շրջանակներին 3 տող.*

ՍԷԼՉԻՆՈՐԴԻՅՈՀԱ

ԹՎՌՃԼ

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ|Ս ԷԼՉԻՆ, ՈՐԴԻ
ՅՈՀԱՆ|ԻՆ. ԹՎ. :ՌՃԼ: (1681):

928. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև. նախորդների մոտ. հարավային կողին ձիավոր՝ զինված հրացանով, առջևից փախչում են 2 քարայծ. ապա երեք լարանի քյամանչա, քանոն՝ բաղմալար, նվագող մարդ: Շրջանակներին 4 տող.




ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՈՍ Է|ԼՉԻՊԷԿԻՆ,
ՈՐԴԻ ⌊Ս⌋ԱՐՈՒԽԱՆԻՆ. Ե|Ս ԱՎԱՆԷՍ
ԿԱՆԿ⌊Ն⌋ԵՑՈՒՑԻ Խ⌊Ա⌋ՉՍ, ԹՎ. :ՌՃԽ:
(1691):

Ծանոթ. *Թվականը գրված է հյուսիսա-յին կողին՝ խորաններից վեր:*

929. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ, երեսին 5 տող.

ԱՅՍԷՀԱԳԻ
ՍՏԽԱՈՒՄ
ԻՆԿՈՂԱԿԻՑ
ԷԼՉԻՆԹ
ՎՌՃԼԵ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻ|ՍՏ ԽԱՆՈՒՄ|ԻՆ,
ԿՈՂԱԿԻՑ | ԷԼՉԻՆ. Թ|Վ. :ՌՃԼԵ:
(1686):

930. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է նախորդներին մոտ. հարավային կողին հեծյալ, առջևը ջրածիկ, ապա պարող և նվագող, որոնց արանքում ղավ և ըլիթ, իսկ առաջները հացի սեղան. շրջանակներին 3 տող.




ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷ|ԽՈՍ ՄԵԼԻՔ
ՊԷԿԻՆ, ՈՐԴԻ ԷԼՉԻՆ. ԹՎ.|
:ՌՃԽ:. (1691):

Լուսանկ. 190

931. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հյուսիսային կողին հեծյալ՝ նետ ու աղեղով զինված, առջևում որսի կենդանի, մի պատանի բռնել է ձիու սանձից. նվագող սազի վրա, ապա քյամանչա և քանոն. շրջանակներին 3 տող.




ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽ|ՈՍ ՆԱՐԻ-
ՆԻՆ, ՈՐԴԻ ԷԼՉԻՆ. ԹՎ.
:ՌՃԾԲ: (1703):

Լուսանկ. 191

*932.* ՏԱՊԱՆԱՔԱՐ, *տափակ. երեսին 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻ
ՍՏՀՈՒՐԻ
ԽԱՆԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻ|ՍՏ ՀՈՒՐԻԽԱՆԻՆ:

Ծանոթ. *Գտնվում է նախորդների շարքում, նույն տոհմին է վերաբերում:*

Ծանոթ. *№№ 921—932 արձանագրությունները վերաբերում են Բալասանի տոհմին:*

*933.* ՏԱՊԱՆԱՔԱՐ, *տափակ, գտնվում է գերեզմանատան արևելյան եզրին. երեսին 2 տող.*

ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ ԹՎՌՃԿ
ՄԱՐԵԱՆԻՆԿՈՂԻՑՄԵԼԻՔ
Պ:ԿԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԱՐԵԱՆԻՆ, ԿՈՂԱԿԻՑ ՄԵԼԻՔ ՊԷԿԻՆ. ԹՎ. :ՌՃԿ: (1711):

*934.* ՏԱՊԱՆԱՔԱՐ, *տափակ, մեծ, երեսը երեք հարթության բաժանված. 8 տող.*

ԵՍԱԲՍԱԲԵԼ
ԵՐԵՑՍՀԱՆ
ԳՈՒՑԻՍՏԱՊ
ԱՆՍՈՐԴՈՑ
ԻՄՈՑՍԻՄԷՈՆ
ԻՆԵՒԴՍՏԵՐ
ԱՑԻՄՈՑ ՀՈՒՐԻԽՆԻՆԽԱՆՍՈԼԹԱՆԻՆ

ԹՎՌՃԵ

ԵՍ ԱԲՍԱԲԵԼ| ԵՐԵՑՍ ՀԱՆ|ԳՈՒՑԻ ՏԱՊ|ԱՆՍ ՈՐԴՈՑ| ԻՄՈՑ ՍԻՄԷՈ-Ն|ԻՆ, ԵՒ ԴՍՏԵՐ|ԱՑ ԻՄՈՑ ՀՈՒ-ՐԻԽԱՆԻՆ, ԽԱՆՍՈԼԹԱՆԻՆ.| ԹՎ. :ՌՃԵ: (1656):

Ծանոթ. *Գտնվում է գերեզմանատան հարավում:*

*935.* ՏԱՊԱՆԱՔԱՐ, *տափակ, գտնվում է գերեզմանատան կենտրոնում. երեսին 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏՇԱՐԲԱ
ԹԻՆԹՎՌՃԵ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ՇԱՐԲԱ|ԹԻՆ: ԹՎ. :ՌՃԵ: (1656):

*936.* ՏԱՊԱՆԱՔԱՐ, *փոքր, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. հյուսիսային կողին ձիավոր՝ առջևը գավ և թևերը կանթած մարդ. շըր-ջանակներին և քանդակների արանքում.*

ԿԱԶԻՆՈՐԴԻՇԱՀԶԱՏ
ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽՕՍԷ
ԹՈՌԹԱՄՈ
ՒՐԻՆԲԱՐ
ՑԻ
ԻՆԹՎՌՃԼԸ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ ԷԿԱԶԻՆ, ՈՐԴԻ ՇԱՀԶԱՏԻՆ. ԹՈՌ ԹԱՄՈՒՐԻՆ ԲԱՐՑԻ: ԹՎ. :ՌՃԼԸ: (1689):

Լուսանկ. 192

*937. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է գերեզմանատան կենտրոնում. վրան 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏԹԱՄՈՒ
ՐԻՆԹՎՌՃԺ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ԹԱՄՈՒ|ՐԻՆ. ԹՎ. ։ՌՃԺ։ (1661)։

*938. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է գերեզմանատան հարավում. երեսին 5 տող.*

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍՏՇԱ
ՀՆԱՈՐԻ
ՆԹՎՌ
ՃԹ

ԱՅՍ Է ՀԱ|ՆԳԻՍՏ ՇԱ|ՀՆԱՈՐԻՆ. ԹՎ. ։Ռ|ՃԹ։ (1660)։

*939. ՏԱՊԱՆԱՔԱՐ. տափակ, կից նախորդին, երեսին 4 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏԽԱՆՈՒՄ
ԱՂԻՆԹՎՌ
ՃԺԲ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ԽԱՆՈՒՄ| ԱՂԻՆ. ԹՎ. ։Ռ|ՃԺԲ։ (1663)։

*940. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է գերեզմանատան հարավում. երեսին 6 տող.*

ԵՍԳՐԻԳՈՐՍՀԱՆ
ԳՈՒՑԻՏԱՊԱՆՍ
ՀօՐՆԻՄՈՅՄՈՆ
ԹՊԱՂԻՆԹՎՌ
ՃԺ
Գ

ԵՍ ԳՐԻԳՈՐՍ ՀԱՆ|ԳՈՒՑԻ ՏԱՊԱՆՍ| ՀՕՐՆ ԻՄՈՑ ՄՈՆ|ԹՊԱՂԻՆ. ԹՎ. ։ՌՃԺԳ։ (1664)։

*941. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է կենտրոնական մասում. հարավային կողին հեծյալ, առջևը պատանի, ապա մի մարդ՝ աջում դաշնա, ձախում գավ բռնած և նվագող՝ երկու ականջանի սազով. շրջանակներին ուղղուցիկ և զեղեցիկ տառերով, 3 տող.*

ՆԵՑԻՍԲԽՉՍԲԱՐԷԽՕՍՈՐԴՈՅԻՄՈՅԱԼԷՔՍԱ
ԵՍԶԱՔԱՐԷՍԿԱՆԳ
ՆԻՆ։ԹՎ։ՌՃԺԲ

ԵՍ ԶԱՔԱՐԷՍ ԿԱՆԳՆ|ԵՑԻ ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ԱԼԷՔՍԱ|ՆԻՆ. ԹՎ. ։ՌՃԺԲ։ (1663)։

Լուսանկ. 193

*912.* **ԽԱՉՔԱՐ**, *մեծ և զեղաքանդակ, երկաստիճան պատվանդանի հետ միակտուր. քիվին, շրջանակներին և հարավային կողին 19 տող.*




ՍԲ. Խ[Ա]ՉՍ ԲԱՐԵԽՕՍ ՋԱՔԱՐԻՆ ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ.| ՏՐ. ԱԾ.| ԹՎԻՆ ՀԱՅՈՑ :Ռ|Ճ: ԵՒ :ԺԴ:| (1665): ՅԻՇԵՑԷՔ ԱՆԱՐԺԱՆ ՄԵԼԻՔԲԷԿ| ԵՒ ՊԱՂԱՍԱՆ ԿԱԶՄՈՂ ԽԱՉԻՍ:|

ԿԱՄԱՒՆ ԱՅ| ԵՍ ՎԱՐԴ|ԱՆՍ, ԵՂԲԱ|ՐՆ ԻՄ ԳՐ|ԻԳՈՐՆ ԿԱՆ|ԳՆԵՑԱՔ| ԽԱՉՍ ԲԱՐԷԽ|ԱՒՍ ՀՕՐԵՂ|ԲՕՐՆ ՄԵՐՈՅ| ՋԱՔԱՐԻՆ ԵՒ| ԿՈՂԱԿՑԻՆ| ՆԱՆԵՐԻՆ:

| ԻՇ Ե[Յ]Ց[Է]Ք Ի ՔՍ:| ԹՎ. :ՌՃԺԴ: (1665):

Ծանոթ. *Արևմտյան երեսի բոլոր տառերն ուռուցիկ են, հարավային կողին՝ փորագիր: Գտնվում է գերեզմանատան կենտրոնում:*

**Հրատ.** *Ամբատյանց,* **538:**
**Լուսանկ. 194** *(երկու մասով):*

*913.* **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տավանկ, նախորդ խաչքարի դիմաց, երեսին 2 տող.*

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՋԱՔԱՐԱՅԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ՋԱՔԱՐԱՅԻՆ:

**944. ԽԱՉՔԱՐ**, *մեծ, ագուցված է գյուղի արևելյան մասում (խճուղուց վեր) գտնվող ավերակ ձիթհանի հարավային պատի մեջ ներքուստ. երեսին 11 տող.*




ԿԱՄՕՆ ԱՅ. ԵՍ [ՂՈ]ՒԿԱՍ ԵՒ ԵՂԲԱՅՐՆ Ի|Մ ԱՎԱՆՍ. ՈՐԴԻ ՆԵՐՍ|ԷՍԻՆ, ՇԻՆԵՑԻՆՔ ՍՐ|ԱՆՈՑՍ, ՎԵՐԻ| :Բ: ՃԱՂԱՑՍ. ԱԾ. ՍԵՒ| ՔԱՐԻ ՄՕՏ.| ՅԻՇԱՏԱԿ ՈՐԴ|ՈՑ ՄԵՐՈՑ:| ԹՎ. :ՌՃ...:

Ծանոթ. *Թվականի վերջին տառը ջարդված է։*

*Հիշատակված երկու ջրաղացները գտնվում են գյուղի արևելյան ծայրում. մեկը գործում է այժմ էլ, մյուսը ավերակ է։*

Հրատ. *Սմբատյանց, 538։ Լալայան, XVIII, 152։*

**945. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *մեծ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. հյուսիսային կողին հեծյալ՝ աջով բռնել է սանձը, ձախով ղաթան, որի մի կողմից բռնել է այլ մարդ՝ ձեռին գավ, ապա երկլարանի սազ նվագող. մի այլ մարդ էլ բռնած ունի լուրլ, առաջներում ուտելիքի սեղան. շրջանակներին 3 տող.*




ՍՐ. Խ[Ա]ՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՏԱ|ՆՈՒՏ[Է]Ր ՂՈՒԿԱՍԻՆ, ՈՐԴԻ ՆԵՐՍԷՍ|ԻՆ: ԹՎ. :ՌՃԻ: (1671):

Հրատ. *Սմբատյանց, 538,* Լուսանկ. 195

**946. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *տափակ, նախորդի մոտ. երեսին 5 տող.*




ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ|Տ ԵՂԻՍԱՓԷԹ|ԻՆ, ԿՈՂԱԿԻՑ ՂՈ|ՒԿԱՍԻՆ. ԹՎ. :Ռ|ՃԽ: (1691):

**947. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *նախորդների մոտ, հարավային կողին կենցաղային տեսարան, հյուսիսային կողին խորաններ և շրջանակներին 3 տող.*




ԵՍ ՂՈՒԿԱՍ ՏԱՆՈ|ՒՏ[Է]ՐՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ ՈՐ|ԴՈՑ ԻՄՈՑ ՍԱՐԳԻՍԻՆ|: ԹՎ. :ՌՃԻԷ: (1678):

Ծանոթ. *Թվականը հարավային կողին է։*

948. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, նախորդների մոտ. հյուսիսային կողին հեծյալ որսորդ և քարայծ, դիմացը մարդ, որը աջով բռնած ունի գավ և ձախով՝ բլիթ. առջևը հացի սեղան. շրջանակներին 3 տող.

ՕՍԱՎԱՆԻ ՆՈՐԴԻ ՆԵՍԷ
ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽ
ՍԻՆԹՎՌՃԻԲ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽ|ՕՍ ԱՎԱՆԻՆ, ՈՐԴԻ ՆԵՐՍԷ|ՍԻՆ. ԹՎ. ՌՃԻԲ (1673):

Լուսանկ. 196

949. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, խաչքարման, գտնվում է գերեզմանատան արևելյան եզրին, հարավային կողին հեծյալ, աջով բռնել է սանձը, ձախով մի բլիթ, որի մյուս կողմից բռնել է այլ մարդ՝ ձախ ձեռքին գավ: Ձիու առաջ պարող պատանի, շրջանակի վերին անկյունում միայն թվականը.

ԹՎՌ
ՃԻԷ

ԹՎ. ՌՃԻԷ (1678):

950. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է նախորդների մոտ. հյուսիսային կողին հեծյալ. գավ բռնած մարդ, նվագող և պարող. առաջներին հացի սեղան. շրջանակներին 3 տող.

ՕՍԷՏԿԱՐԻՍՈՐԴԻԱՎԱՆԻՆԹՎՌ
ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽ
ՃԼԲ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕ|Ս Է ՏԿԱՐԻՍ, ՈՐԴԻ ԱՎԱՆԻՆ. ԹՎ. ՌՃԼԲ (1683):

951. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է նախորդների մոտ. հյուսիսային կողին հեծյալ, աջով բռնել է սանձը, ձախով՝ գաթա, որից բռնած ունի նաև առաջին մարդը, որի մյուս ձեռքին գավն է. հետո կրկին երկու մեծ գավեր, ապա կերակրասեղան. շրջանակներին 3 տող.

ՄԻՐԶԱՅԻՆՈՐԴԻՍԱՐՔԻՍԻՆԹՈՌԴՈ
ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽՈՍ
ԼԻԿԱՍԻՆԹՎՌՃԾԲ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՈՍ Մ|ԻՐԶԱՅԻՆ, ՈՐԴԻ ՍԱՐՔԻՍԻՆ, ԹՈՌ Դ.Ո|ԻԿԱՍԻՆ. ԹՎ. ՌՃԾԲ (1703):

952. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ, երեսին 11 տող.

ԱՅՍԷ
ՀԱՆԳԻՍ
ՏԵՂԻՍԱ
ՅՓԷԹՐ
ԻՆՈՐԷԿՈ
ՂԱՅԿԻՑ
ՄՈՒՋԻՆ
ՓԽՑԱՌ
ԱԾԹՎՌ
ՃԿԼԵ
ԲԼՆՋԷ

ԱՅՍ Է| ՀԱՆԳԻՍ|Տ ԵՂԻՍԱ|ՅԵՓԷԹԹԻՆ, ՈՐ Է ԿՈ|ՂԱՅԿԻՑ ՄՈՒՋԻՆ|. ՓՈԽԵՑԱՒ ԱՌ| ԱԾ. ԹՎ. :ՌՃԿ: ԵՐ. (1711)...:

Ծանոթ. *Վերջին տողի փակագիրը մնում է անորոշ։*

953. ՏԱՊԱՆԱՔԱՐ, *փոքր, տափակ, նախորդի մոտ, երեսին 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆ
ԳԻՍՏՍԱՆՏՈ
ՒԽՏԻՆՅԱՎՆ

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՍԱՆՏՈ|ՒԽՏԻՆ ՅԱՎՆ.

Ծանոթ. *Պատկանում է նույն Ներսեսի տոհմին և ժամանակով մոտ է նախորդներին։*

954. ՏԱՊԱՆԱՔԱՐ, *փոքր, օրորոցաձև, նախորդի մոտ, հյուսիսային կողին գավը ձեռքին մարդ, մեկ ուրիշն էլ՝ մի ձեռքին ըլիթ, մյուսում՝ սրինգ, ապա հայելիանման իր և փոքր գավ. շրջանակներին 4 տող.*

ԹՌՃԽԲ
ՋՕՍՄԲՓՇՅԻՆԹՌՆՂ

ՍԲ. ԽԱ|ՉԱՍ ԲԱՐԵԽ|ՕՍ ԱՄԻՐ ՓԱՇԱՅԻՆ, ԹՈՌՆ Ղ|ՈՒԿԱՍԻՆ ԹՎ. :ՌՃԽԲ: (1693):

955. ՏԱՊԱՆԱՔԱՐ, *տափակ, նախորդների մոտ. երեսին 5 տող.*

ԱՅՍԷՀՆԳ
ԻՍՏԹԻԼԽԱՆԻՆ
ԿՈՂԱԿԻՑՅ
ՈՀԱՆԻՆԹՌ
ՃԼԲ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ԹԻԼԽԱՆԻՆ|, ԿՈՂԱԿԻՑ Յ|ՈՀԱՆԻՆ. ԹՎ. :Ռ|ՃԼԲ: (1683):

Ծանոթ. *ԹԻԼԽԱՆ անվան վրա պատիվ կա. թերևս սղված ձև է։*

956. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան կենտրոնական մասում. հարավային կողին մաճկալը բռնել է արորի մաճից, որն ունի ականջներ և երկու լուծ անասուններ. վերևում՝ մանգաղ, ուրագ, գավ, հաց և հրացան. շրջանակներին 3 տող.

ՕՍՇԽԻՆՈՐԴԻՄԵԼԻՔՍԵԹԻՆ
..ԽՉՍԲԱՐԷԽ
ԹՎՌՃ...

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ ՇԽԻՆ, ՈՐԴԻ ՄԵԼԻՔՍԵԹԻՆ.| ԹՎ. ՌՃ...

Ծանոթ. Արձանագրության սկզբի և վերջի մասերը թաղված են հողի մեջ։

957. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, կից նախորդին, երեսին 4 տող.

ԱՅԷՀԱԳԻՍՏ
ՁՈՒՒՆԿՈՂԱԿ
ԻՑՇԽԻՆ:ԹՎ
ՌՃԽԱ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՐՁՈՒԻՆ ԿՈՂԱԿԻՑ ՇԽԻՆ. ԹՎ.| ՌՃԽԱ: (1692):

958. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. հյուսիսային կողին որսի տեսարան և նվագողներ. շրջանակներին 3 տող.

ՍՇԱՀՆԱԶԱՐԻՆՈՐԴԻԳԻՐԱԳՈ
ՍԲԽՉՍԲԱՐԷԽԱՒ
ՍԻՆ:ԹՌՃԽԵ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՇԱՀՆԱԶԱ-ՐԻՆ, ՈՐԴԻ ԳԻՐԱԳՈՍԻՆ.| ԹՎ. ՌՃԽԵ: (1696):

959. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, նախորդի մոտ. հյուսիսային կողին հեծյալ, նվագող, երկու գավ և բլիթ. շրջանակներին 3 տող.

ՕՍՍԱՐԳՍԻՆՈՐԴԻԳԻՐԱԿՈՍԻՆ
ՍԲԽՉՍԲԱՐԷԽ
ԹՎՌՃԾԱ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽՕՍ ՍԱՐԳՍԻՆ, ՈՐԴԻ ԳԻՐԱԿՈՍԻՆ.| ԹՎ. ՌՃԾԱ: (1702):

960. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, գեղաքանդակ, նախորդի մոտ. ճակատային կողին հեծյալ, պարող, հացի սեղան, գավեր, բլիթ և նվագող. շրջանակներին 3 տող.




ՄՐ. ԽՈՋԱ ԲԱՐԷ|ԽՈՍ ԱՎԱՆԷՍԻՆ, ՈՐԴԻ ԳԻՐԱԿՈՍԻՆ.| ԹՎ. ՌՃԾԲ: (1703):

961. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է գերեզմանատան արևմտյան մասում. երեսին 6 տող.

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍՏԳՐԱ
ԿՈՍԻՆՈՐԴԻ
ԱՍԱՏՈ
ԻՐԻՆ ԹՎ.
ՌՃԾԶ

ԱՅՍ Է ՀԱ|ՆԳԻՍՏ ԳՐԱ|ԿՈՍԻՆ, ՈՐԴԻ| ԱՍԱՏՈ|ՒՐԻՆ. ԹՎ. ՌՃԾԶ: (1707):

962. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է՝գերեզմանատան արևելյան մասում. հյուսիսային կողին Թամքած ձի, որի սանձից բռնել է մի մարդ, ետևից մի այլ հեծյալ՝ դաշույնը ձեռքին. հրացան, նվագող, գավ ու բլիթ բռնած մարդ. շրջանակներին 2 տող.




ՄՐ. ԽՈՋԱ ԲԱՐԷԽՈՍ| ԹՌՄԱՆԻ ՈՐԴԻ ԱԿՈԲԻՍ. ԹՎ. ՌՃԽԳ: (1694):

963. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, նախորդին մոտ. հյուսիսային կողին հեծյալ, հովվի կեռ դավաղան, ոչխար խուզելու մկրատ, երկու պարողներ և գավ ու բլիթ. շրջանակներին 3 տող.




ՄՐ. ԽՈՋԱ ԲԱՐԷ|ԽԱԻՍ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ, ՈՐԴԻ ԱԿՈԲԻՆ. ԹՎ. ՌՃԾԲ: (1703):

*964. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, Նախորդին մոտ. հյուսիսային կողին կենցաղային տեսարան. շրջանակներին 2 տող.*



ԽԱՉՍ ՊԱՐՏԷԽՕՍ ԱՍԼԱՆԻՍ, ՈՐԴԻ
ԹՈՒՄԱՆԻՆ. ԹՎ. ՌՃԾԲ: (1703)·

*965. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, Նախորդի մոտ. երեսին 4 տող.*

ԱՅՍԷՀՆԳԻՍՏ
ՀՌՈՒՄԻՆԿՈՂ
ԱԿԻՑԱՍԼԱՆ
ԹՌՃԽԹ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ՀՌՈՒՄԻՆ, ԿՈՂ|ԱԿԻՑ
ԱՍԼԱՆԻՆ|. ԹՎ. ՌՃԽԹ: (1700):

*966. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. երեսին 8 տող.*

ԱՅՍԷՀՆ
ԳԻՍՏԽԱ
ՄԲԱՐԻՆԿՈ
ՂԱԿԻՑ
ԱՂԱՑՊ
ԷԿԻՆԹ
ՎՌՃԾ
Ա.

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ԽԱՄ|ԲԱՐԻՆ, ԿՈՂԱԿԻՑ|
ԱՂԱՑՊ|ԷԿԻՆ. ԹՎ. ՌՃԾԱ: (1702):

*967. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. երեսին 9 տող.*

ԱՅՍԷՀՆԳԻ
ՍՏՑԱԹԱՄԻ
ՆՈՐԴԻՄԻՐՈ
ՄԻՆ
ԹՌՃԽ
ԵՍԽՕՃԱՅՄ
ԱԼՔՈՒՄԿԱԶ
ՄԵԼԴՎԻՏԱՊ
ԱՆՍ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻ|ՍՏ ՑԱԹԱՄԻ|Ն, ՈՐԴԻ ՄԻՐՈ|ՄԻՆ.
ԹՎ. ՌՃԽ:| (1691):
ԵՍ ԽՕՃԱՑ Մ|ԱԼՔՈՒՄՍ ԿԱԶ|ՄԵԼ ԴՎԻ
ՏԱՊ|ԱՆՍ:

968. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. երեսին 7 տող.*

ԱՅՍԷՀՆ
ԳԻՍՏՄՐԳ
ԱՐՏԻՆԿՈ
ՂԱԿԻՑՏՐ
ՂԱԶԱՐԻՆ
ԹՈՒՃԾ
Ե

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՄԱՐԳ|ԱՐՏԻՆ, ԿՈ|ՂԱԿԻՑ ՏՐ.| ՂԱԶԱՐԻՆ.| ԹՎ. ՌՃԾ|Ե. (1706):

969. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ, երեսին 8 տող.*

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍՏԽԱ
ՆՈՒՄԻՆ
ԿՈՂԱԿԻՑ
ՏՐԱԹԱ
ՆԻՆԹ
ՌՃԾ
Զ

ԱՅՍ Է ՀԱ|ՆԳԻՍՏ ԽԱ|ՆՈՒՄԻՆ|, ԿՈՂԱԿԻՑ| ՏՐ. ԱԹԱ|ՆԻՆ. ԹՎ. ՌՃԾ|Զ: (1707):

970. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավային կողին կենցաղային տեսարան շրջանակներին 3 տող.*

ԵՍԷՎԱԼԱՍԿԱՆԿԵՑԻՍՈՐԲԽՉ
ՌՈՒՍՏԱՅՍԷԼԻՄՈՐԾԻԶ
ԵՍԳԱՆՃԱԿԵՑԻ
ԵՌԱՄԲԴԱՍԻՈՐԴԻ

ԹՎՌ
ՃՀԲ
ՊԱՐՈՆՊ
ԱՊԻՈՐԴ
Ի ՆԱՅՍԾԱ
ՅԵՐՍՂԻՆ

ԵՍ ԳԱՆՃԱԿԵՑԻ| ՈՒՍՏԱՅ ՍԷ-ԼԻ[Մ] ԳՈՐԾԻ Զ|ԵՌԱՄԲ ԴԱՍԻ ՈՐԴԻ ԹՎ. ՌՃՀԲ: (1723):
ՊԱՐՈՆ Պ|ԱՊԻ ՈՐԴԻ . . . . .
. . . . . . . . . . . . . .
ԵՍ Է[Վ]ԱԼԱ ԿԱՆԿԵՑԻ Ս[Ո]Ւ|ՐԲ Խ[Ա]ՉՍ:

971. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ. վրան 7 տող.*

ԱՅԱՀԱՆ
ԳԻՍՏՊԱ
ԴՏԱՅԳՈ
ԻԼԻՆԿՈՂ
ԱԿԻՑԴԱ
ՍՈՒՄԻՆ
ԹՎՌՃԿԲ

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՊԱ|ԴՏԱՅԳՈ|ԻԼԻՆ, ԿՈՂ.|ԱԿԻՑ ԴԱ|ՍՈՒՄԻՆ. ԹՎ. ՌՃԿԲ: (1713):

Լուսանկ. 197

972. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում, կից նախորդին. հարավային կողին հարթաքանդակ տեսարան, հեծյալ կին, սանձից բռնած պատանի. ապա հեծյալ տղամարդ, մի այլ պատանի, հրացան, հացի սեղան և խորովածի խորույկ՝ վրան երկու շամփուր, շրջանակներին 3 տող.

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱՍԹԱ
ՄԱԼԻՆՈՐԷՈՐԴԻՊԱՊԻՆ
ԹՎԻՆՌՃԿԲ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՍ ԹԱ|ՄԱԼԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՊԱՊԻՆ.| ԹՎԻՆ ՌՃԿԲ: (1713):

973. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան հարավ-արևելյան մասում. հարավային կողին ձիավոր՝ սուրը ձեռքին, առջևին եղջերու և քարայծ, վերևում աղեղ, գավ և հացեր. ապա սազ և քյամանչա. քանոն և սազ նվագողներ ու պարող, հացի սեղան և գավ ու բլիթ: Հյուսիսային կողին խա-րաններ, ապա պարող և բլիթ. շրջանակներին 3 տող.

ՍԲԽԱՉՍԲԱՐԷԽԱՍ
ՅՈՀԱՆԻՆՈՐԷՈՐԴԻՏԱՆՈՒՏԵՐՂԱՍՈՒՄԻՆ
ԹՎՌՃԿ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱ|Ս ՅՈՀԱՆԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ ՏԱՆՈՒՏԷՐ ՂԱՍՈՒ-ՄԻՆ.| ԹՎ. ՌՃԿ: (1711):

974. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. վրան 9 տող.

ԻՇԱՅԱՏԱԿ
ԱՋՏԱՊԱՏ
ԻՑԻՅՈՒՆԱ
ՆԻՆ
ՈՐԴԻՕՎԱՅ
ԳԻՄԻՆՄԱՐ
ԹՈՒԹՈՒԼ
ԹՌՃԿԲ
ԷՐ

ԻՇԱՅԱՏԱԿ| ԱՋՏԱՊԱՏ|ԻՑԻ ՅՈՒՆԱ|ՆԻՆ,| ՈՐԴԻ ՕՎԱՅ|ԳԻՄԻՆ. ՄԱՐ| ԹԱԹՈՒԼԻՆ|. ԹՎ. ՌՃԿԲ: (1713):

975. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ, վրան 6 տող.



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՎԱՐՏՈՒՄԻՆ. ԹՎ. ՌՃԿԲ: (1713): ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՇԱՀԳՈՒԼՈՒՄԻՆ ՏՈՒՍՏՐ . . . .

976. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է արևելյան մասում. Հարավային կողին քյամանչա և թառ նվագողներ, որոնց առջև գավեր և ուտելիքներ, ապա հրացան, թամբած ձի, որը և նրա մաճը բռնած մարդ. շրջանակներին մեկական տող.



ՍՄ. ԽԱՋՈ ԲԱՐԵԽԱԻՍ ՂԱԶԱՐԻՆ, ՈՐԴԻ ՄԻՐԶԻՆ. ԹՎ. ՌՃԿԵ. (1716):

977. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արևմտյան մասում. Հարավային կողին հարսանեկան տեսարան, առջևից փեսան է, հետևից հարսը, երկուսն էլ հեծյալ. հարսի մասով այծամ է փախչում, փեսայի մասով՝ եղջերու. փեսայի ձիու սանձից բռնել է մի մարդ, որն աջ ձեռքով բռնել է կենաց ծառի բնից, ապա սազ նվագող, առջևը կերակրամաններ ու գավեր, վերջում ննջեցյալ՝ ձեռքերը խաչած կրծքին: Արևելյան ճակատին թևատարած արծիվ՝ ճանկերով բռնել է խոյ. շրջանակներին 2 տող.



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԵՀՐԱԲԻՆ, ՈՐԴԻ ՄԵԼՔԻՍԵԹԻՆ, ԵՂԲԱՐ ՄԵԼԻՔԻՆ. ՌԿԵ: ԱՄԵՆԱՑ Փ[Ո]ԽԵՑԱՒ Ի ՔՍ:

Լուսանկ. 198

978. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արև-մըտյան մասում. հարավային կողին թամքած ձի, քյամանչա իր սարքով. գլ-մացր ըլիթներ ու գավեր, ապա ննջեցյալ. հյուսիսում՝ խորաններ ու խաչեր. շրջանակներին 3 տող.

ԵՍ ՊՈՂՈՍ ԿԱՆԿԷՑԻ ԽԱՉՍ ՓՐԿՈԹ
ՀՈԳՈՅՆ ՈՐԴՈՅՆ Ի
ՄԻՀՐԱՊԻՆ

ԵՍ ՊՈՂՈՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՅՆ ՈՐԴՈՅՆ ԻՄ ՄԻՀՐԱՊԻՆ:

979. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է գերեզմանատան կենտրոնական մասում. երեսին 2 տող.

ԱՅՍ ԷՀԱՆԳԻՍ
ՏՆԱՆԵՐԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ|Տ ՆԱՆԵՐԻՆ:

980. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում. հյուսիսային կողին կենցաղային տեսարան. շրջանակին մեկ տող.

ԱՅՍ ԷՀԱՆԳԻՍՏ ՊԱ-ԱՆԻ ՈՐԴԻՅԱՐՈ-ԹԻԷՆԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱԽԱՋԻ ՈՐԴԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԻՆ:

Ծանոթ. ՊԱԽԱՋ անունը հնարավոր է ՊԱԽԱՆ կարդալ, բայց երկուսն էլ անծանոթ են, թերևս Պօաչի=Ներկարար։

## ԵՐԱՆՈՍ (ՀՆՈՒՄ՝ ՋԱԳ)

Գյուղի հնագույն Ջագ անունը հիշատակված է և՛ Ստ. Օրբելյանի ցուցակում և՛ «Ջամբռի» մեջ՝ Սողոգա վանքի վիճակի գյուղերի շարքում։

Գյուղում արձանագրություններ ունեցող հուշարձանները հետևյալներն են.

ա) Ս. Աստվածածին, ոչ հին եկեղեցի, գտնվում է գյուղամիջում, Նրա շրջափակ-ընդարձակ բակի գերեզմանատանը։ Եկեղեցու ներսում նախկինում դրված են եղել երկու հին խաչքարեր, մեկը Վեմ քարի փոխարեն՝ բեմի վրա՝ 1212 թվականով և մյուսը պատի տակ՝ 1337 թվականով։ Այս երկու խաչքարերն էլ այժմ չկան։ Բակը ընդարձակ է, ուր կան բազմաթիվ խաչքարեր ու տապանաքարեր, հնագույն թվականն այստեղ 1518-ն է։

բ) Գերեզմանատուն, գտնվում է գյուղի հարավ-արևմտյան եզրին. այստեղ ևս կան խաչքարեր և տապանաքարեր, որոնցից հնագույնն ունի 1518 թվականը։

Սմբատյանցը և նրան կրկնելով Լալայանը՝ գյուղի հարավում, բարձր լեռան գագաթին եղած հնավայր մասը համարում են «Ջամբռի» հիշատակած Սալկատի անապատը. այդ սխալ է։ Մաքենյաց վանքին ենթակա Սալկատ գյուղի մինչև այժմ անհայտ վայրը մեր հայտնաբերած նոր արձանագրության շնորհիվ ճշտվում է։ Այն եղել է երկու Ալաչալու գյուղերի և Մաքենյաց վանքի միջև տարածվող հարթ բարձրավանդակի վրա, ճետեսքար